

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՆԻՆ ՉՄԻԱՑՎԵՑ ՅԱՅԱՍՏԱՆԻՆ (1921թ.)

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈՒՅԱՆ

Եթե հաշվի չառնենք Սևրի պայմանագիրը, որն, ինչ խոսք, հայանպաստ էր, սակայն, ցավոք, մնաց թղթի վրա և չկենսագործվեց կյանքում, տպա 1918–1921 թթ. ընթացքում կնքվել են Հայաստանին առնչվող (անմիջական կամ միջնորդավորված) միջազգային ևս հինգ պայմանագրեր՝ Բրեստի, Բաթումի, Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի, որոնք ավել կամ պակաս չափով արձանագրել են միայն տարածքային կորուստներ: Ինչսիսի գնահատականներ էլ որ տրվեն այդ պայմանագրերին, մի բան ակնհայտ է. դրանց միջև կա ներքին կապ և սրանք կարծես մեկ շղթայի տարրեր օղակներ լինեն: Անմիջական կապի և իրավահաջորդության տեսակետից առանձնապես իրար շատ նման են 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի խորհրդա-թուրքական և հոկտեմբերի 13-ի Կարսի թուրք-անդրկովկասյան պայմանագրերը: Այս պայմանագրերի՝ Հայաստանին առնչվող հիմնական խնդիրը, իհարկե, հայ-թուրքական սահմանի ճշգրտման հարցն էր:

Ինչպես հայտնի է, 1921 թ. Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածով ու պայմանագրերին կից համապատասխան հավելվածով, առանց խորհրդային Հայաստանի պատվիրակության գիտություն ու մասնակցություն, գծվեց հայ-թուրքական պետական սահմանը՝ արձանագրելով ու վավերացնելով արևելահայ մի շարք մարզերի (Կարս, Արդահան, Կաղզվան, Սուրմալու) բռնակցումը Թուրքիային, իսկ պայմանագրի 3-րդ հոդվածով Նախիջևանի մարզը, որը պատմականորեն որևէ կապ չի ունեցել ո՛չ Ադրբեջանի ե ո՛չ էլ Թուրքիայի հետ, օկուպացվելով նվիրաբերվում է Ադրբեջանին՝ հետագայում այն Հայաստանին չմիացվելու պայմանով¹:

Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն, ռուս-թուրքական պայմանագիրը Անդրկովկասի խորհրդային հանրապետություններին բնորոշելի և ճանաչելի դարձնելու նպատակով ուղիղ յոթ ամիս անց կնքվեց Կարսի պայմանագիրը՝ այս անգամ խորհրդային Ռուսաստանի գիտություն ու վերահսկողությունը մի կողմից Թուրքիայի, իսկ մյուս կողմից Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետություններին՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև: Կարելի է վստահ ասել, որ Կարսի պայմանագիրն ըստ էության նոր պայմանագիր չէր, այլ գործնականում կրկնում և վերահաստատում էր Մոսկվայի պայմանագրի այն հոդվածները, որոնք առնչվում էին անդրկովկասյան հանրապետություններին: Կարսի պայմանագրի 4-րդ հոդվածը, կից հավելվածները և համապատասխան քարտեզը

¹ Հայաստանի Հանրապետության Նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՆՊ ՊԿԱ) ֆ. 114, ց. 2, գ. 132, թերթեր 10–17, Документы внешней политики СССР, т. 3, М., 1959, с. 598–599, Գ. Գ ա լ ո յ ա ն. Հայաստանը և մեծ տերությունները (1917–1923 թթ). Երևան, 1999, էջ 453:

Հայաստանի մասով, դարձյալ փաստում էին, որ հայ-թուրքական պետական սահմանը անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերի հունով՝ թուրքիային թողնելով Արդահանի, Կարսի, Կաղզվանի, Սուրմալուի մարզերը, ինչպես նաև պայմանագրի 5-րդ հոդվածով՝ Ադրբեջանին հանձնելով Նախիջևանի մարզը²:

Կարսի խորհրդաժողովի (կոնֆերանսի) կապակցությամբ ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում հայ-թուրքական սահմանային մի փոքր խնդրի՝ Ախուրյանի աջ (արևմտյան) ափին գտնվող պատմական Անի մայրաքաղաքի ավերակները Հայաստանին կցելու համեստ առաջարկի շուրջ ծավալված բանակցային քննարկումների վրա: Սահմանային այդ փոքր վեճ-դիպլոմատիկ մեկ անգամ ևս ցույց է տալիս թուրքական դիվանագիտության իսկական դեմքը և առհասարակ մտորումների ու խորհրդածուխների հարուստ նյութ է տալիս հայ-թուրքական հարաբերությունների և հնարավոր հաշտեցման հեռանկարի մասին:

Ներկայացվող խնդիրը լավ պատկերացնելու համար հարցի քննությունը սկսենք մի փոքր հեռվից: Ինչպես հայտնի է, Կարսի խորհրդաժողովը բացվել է 1921թ. սեպտեմբերի 26-ին և ավարտվել հոկտեմբերի 13-ին՝ պայմանագրի ստորագրումով: Խորհրդային կողմից խորհրդաժողովին մասնակցում էին Ռևոյազյանի և Մուսկոյանի ղեկավարությամբ Մ. Գանեգլին, Ադր. ԽՍՀ - ներկայացուցիչ Բ. Շահթախտինսկին, Հայկ. ԽՍՀ ներկայացուցիչներ՝ ա.գ. ժողկոմ Ա. Մուսկոյանը և ն.գ. ժողկոմ Պ. Մակինցյանը, Վր. ԽՍՀ ներկայացուցիչներ՝ Շ. Էլիավան և Ա. Սվանիձեն: Աինչ խորհրդաժողովը, ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոն սեպտեմբերի 3-4-ի պլենար նիստերում լսել էր Կարսի խորհրդաժողովի մասին հարցը, և համապատասխան որոշմամբ միացյալ պատվիրակությանը տրվել էր հանձնարարական. «բանակցությունները վարել՝ մնալով Մոսկվայի պայմանագրի խիստ շրջանակներում»³: Կովբյուրոյի հրահանգի համաձայն՝ Մոսկվայի պայմանագրի սկզբունքների ընդունումը պարտադիր էր անդրկովկասյան պատվիրակության համար: Սակայն թուրքերը էին համարվում սահմանային և այլ բնույթի մասնակի ճշգրտումներ ու ուղղումներ: Այդ հիման վրա Կովբյուրոն հրահանգում էր բանակցությունների ընթացքում բարձրացնել Կարսի արոտավայրերի, Կաղզվանի աղահանքերի, ինչպես նաև Ծորոխի շրջանի պղնձահանքերի օգտագործման հարցը: Հրահանգում խոսք չկար ո՛չ Անիի և ո՛չ էլ Կողբի մասին: Վերջում հանձնարարվում էր, որ բանակցություններին մասնակցող անդրկովկասյան հանրապետությունները բոլոր հարցերում պետք է լինեն միակամ ու հանգես գան որպես մեկ միություն⁴: Հարկ է նշել, որ դեռևս 1921թ. մայիսի 7-ին անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների ներկայացուցիչների Բաքվի խորհրդակցությունում էր որոշվել, որ թուրքիայի հետ նախատեսվող առանձին խորհրդաժողովում

² ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 133, թթ. 10-19, ֆ. 113, ց. 3, գ. 54, թթ 15-16: Документы внешней политики СССР, т. 4, М., 1960, с. 420-429.

³ Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ) ֆ. 1, ց. 1, գ. 47, թ. 14, ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 13, թ. 17:

⁴ Նույն տեղում: Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 16.X.1921:

երեք հանրապետությունները պետք է հանգես դան որպես մեկ միասնական կողմ⁵: Իր հերթին խորհրդային Հայաստանի կառավարությունը կազմեց Կարսի խորհրդաժողովին ուղղված պահանջների մի հուշագիր, որում առաջարկվում էին սահմանային և տնտեսական բնույթի որոշ փոփոխություններ Հայաստանի օգտին⁶: Մասնավորապես խոսք էր գնում Կողբի աղահանքերի վերադարձման կամ դրանք անարգել շահագործելու իրավունքի և Ախուրյանի չեզոք գոտի ստեղծելու մասին՝ հավանաբար նկատի առնելով պատմական Անիի ավերակները և դրան հարող մի շարք գյուղերը⁷:

Սկստեմքերի 26-ին բացվեց հաշտության խորհրդաժողովի առաջին լիազուցված նիստը: Տանտիրոջ իրավունքով այն բացեց Թուրքիայի պատվիրակության ղեկավար Ք. Կարաբեքիր փաշան: Նա խոսում էր Սևրի պայմանագիրը պատռելու և խորհրդաթուրքական ժողովուրդների «բարեկամության» մասին: Անդրկովկասի երեք հանրապետությունների միասնությունն ընդգծելու նպատակով ողջույնի ճառով հանգես եկավ Հայաստանի պատվիրակության ղեկավար Ա. Մուսվյանը: Նրա ինտերնացիոնալիստական ելույթը մասնավորապես բովանդակում էր հետևյալը. «Մեզ այսօր հուշում են ոչ թե բուրժուա-ազգայնական կառավարությունների ժառանգությունը թողած վիճելի, անիծված չլուծված հարցերը, այլ հիացմունքը թուրք աշխատավոր ժողովրդի հանգեպ, որը հերոսական պայքար է մղում իր հայրենիքի ազատության համար»⁸:

Թուրքական կողմը առաջարկեց, որ պայմանագիրը կնքվի երեք հանրապետությունների հետ առանձին-առանձին: Դեռևս խորհրդաժողովի նախապատրաստական փուլում Թուրքիան ակնարկ էր արել երեք հանրապետությունների հետ անջատ պայմանադրեր կնքելու մտազրույցի մասին: Դրա շարժառիթն այն էր, որ նրա վերաբերմունքը անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ միանշանակ չէր: Թուրքիան նպատակ ուներ սեպարատ և տարբերակված պայմանագրերի միջոցով իր պայմանները պարտադրել ամենից առաջ Հայաստանին: Թուրքերը նույնիսկ ավելորդ էին համարում ՌԽՖՍՀ ներկայացուցչի մասնակցությունը խորհրդաժողովին⁹, որպեսզի առկա խնդիրները ճակատ առ ճակատ հեշտույցի մեջ լուծեն իրենց օգտին: Խորհրդաժողովում թուրքերը հայտարարեցին, որ իրենք լիազորված են պայմանագիր կնքել յուրաքանչյուր հանրապետության հետ առանձին: Խորհրդային կողմի (Յա. Գանեցկու) փաստարկներից (որ երեք հանրապետությունները գտնվում են տնտեսական և ռազմաքաղաքական սերտ կապերի մեջ) հետո թուրքերը հայտարարեցին, որ իրենք հարցում կանեն Անգորա: Իր հերթին Անդրկովկասյան միացյալ պատվիրակությունն է հեռագրում Անգորա՝ ա. դ. կոմիսար Յու. Քեմալին՝ Հիմնավորելով մեկ միասնական պայմանագիր կնքելու նպատակահարմարությունը:

⁵ ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 71:

⁶ Է. Ա. Զ ո Վ Ր ա բ յ ա ն. Սովետական Ռուսաստանը և Հայ-թուրքական հարաբերությունները 1920–1922 թթ. Երևան, 1979, էջ 262–263:

⁷ ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 167, գ. 23, թ. 97:

⁸ Документы внешней политики СССР, т. 4, с. 373, ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 148:

⁹ А. Н. Хе й ф е ц. Советская дипломатия и народы Востока (1921–1927). М., 1966, с. 161.

յունը: Թեև Անգորան համաձայնում է կնքել մեկ ընդհանուր պայմանագիր, սակայն պայմանով, որ հոգավածները խմբավորված լինեն ոչ թե ըստ հարցերի, այլ ըստ հանրապետությունների¹⁰: Ինքնին հասկանալի է, թե սա ինչ էր նշանակում և թե ում դեմ էր ուղղված պայմանագրի հոգավածներն ըստ հանրապետությունների խմբավորելը: Ի վերջո պայմանագրի կնքման ձևաչափի շուրջ առաջացած և մի քանի օր տևած տարաձայնությունը հարթվում է ու թուրքական կողմը համաձայնում է կնքել մեկ միասնական պայմանագիր¹¹:

Սեպտեմբերի 26-ի նիստում խորհրդային կողմը թուրքական պատվիրակությունը ներկայացրեց սահմանային և տնտեսական բնույթի մասնակի առաջարկների հուշագիր: Հաջորդ սեպտեմբերի 27-ի նիստում ընդունվում են Ք. Կարաբեքիրի հետևյալ երկու առաջարկները՝ ա) Մոսկվայի դաշնագրի սկզբունքների անփոփոխ ընդունումը և բ) ստեղծել սահմանային հարցերը ճշտող միացյալ հանձնաժողով¹²: Հասկանալի է, որ Մոսկվայի պայմանագրի սկզբունքների անփոփոխ ընդունումը նշանակում էր, որ ի սկզբանե նվազագույնի էր հասցվելու սահմանային ճշգրտումների հնարավորությունը: Այդ միաժամանակ նշանակում էր, որ պայմանագրի հոգավածների քննարկումը շատ կողմերով դառնում էր ձևական: Ինչևէ, հենց այս նիստում Յա. Գանեցկին Անդրկովկասի հանրապետությունների կողմից ներկայացրեց հետևյալ երկու սահմանային սահմանները, որոնցից առաջինը վերաբերում էր Անիի ավերակներին, իսկ երկրորդը՝ Կողբի աղահանքերին: Ի պատասխան գրա՝ Կարաբեքիր փաշան հայտնում է, որ իրենք ոչ մի իրավասություն չունեն փոփոխություն կատարելու Մոսկվայի պայմանագրով գծված սահմանների մեջ: Նա հայտարարում է, որ սահմանային հարցերը հնարավոր է քննել միայն Մոսկվայի պայմանագրի շրջանակներում: Կողբի, Կաղզվանի աղահանքերի, Կարսի արոտավայրերի և տնտեսական բնույթի այլ առաջարկներին թուրքական պատվիրակությունը գործնականում մերժողական պատասխան տվեց և միայն վերապահություն արեց հայոց պատմական Անի մայրաքաղաքի ավերակները Հայաստանին վերադարձնելու խնդրում, սակայն պայմանով, որ իրենք պետք է հարցում անեն Անգորայի կառավարությունը: Եվ սեպտեմբերի 27-ի նիստում Անիի շուրջ ծավալվեց բավականին հետաքրքիր և հուսադրող քննարկում, որի մասին վկայում են այդ օրվա արձանագրության նյութերը:

Կարաբեքիրը հայտարարում է, որ իրենք Անգորայի կառավարությունից հրահանգ են ստացել խստորեն հետևել Մոսկվայի պայմանագրի կետերին: «Բացառություն է արվում, — կարդում ենք արձանագրությունում, — միայն Անի քաղաքի համար, որպեսզի հայկական սլատվիրակությունը հաճելի լինի: Թուրքական պատվիրակությունը Անի քաղաքի ավերակները թողնում է Հայաստանին՝ հաշվի առնելով այն պատմական նշա-

¹⁰ ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 88:

¹¹ Նույն տեղում, թ. 97, Ю. А. Багиров. Из истории советско-турецких отношений в 1920-1922 гг. Баку, 1965, с. 71.

¹² «Խորհրդային Հայաստան», 19.X.1921:

նակությունը, որ նա ունի Հայաստանի և Հայ բնակչության համար»¹³: Թուրքական պատվիրակության ղեկավարը կրկին պնդում է, որ Անիի ավերակները վերադարձնելը բացառություն կարելի է համարել Հայաստանի համար: Այդ կապակցությամբ հեռագիր է ուղարկվում Անգորա՝ վերջնական համաձայնություն ստանալու համար:

Անիի խնդրում Ք. Կարաբեքիրի ցուցաբերած սիրալիության համար Յա. Գանեցկին գոհունակություն է հայտնում: Այդ նույն օրը Յա. Գանեցկին հեռագրում (ռադիոգիր) է Մոսկվա՝ Ռուսաստանի ա. դ. ժողովոմ Գ. Ջիչերինին՝ հայտնելով, որ «Անիի խնդրում հարցում է արվել Թուրքական կառավարությանը և հույս կա, որ կլինի համաձայնություն»¹⁴:

Այնուհետև բանակցություններում պատվիրակությունները սկսում են քննարկել այն հարցը, թե ինչպես ձևակերպել Անիի վերադարձի խնդիրը, որ չհակասի Մոսկվայի պայմանագրի սահմաններին վերաբերող առաջին հոդվածին¹⁵: Կարաբեքիր փաշան Թուրք պատվիրակության անունից հայտնում է, որ Արփաչայ (Ախուրյան) գետը պետք է ընդունել որպես Հայ-թուրքական վերջնական սահմանագիծ: «Ինչ վերաբերում է Անի քաղաքի ավերակների դիջմանը, ապա այն կարելի է ընդունել առանձին հոդվածով»: Այնուհետև Կարաբեքիրը ավելացնում է. «Եվ դա արվում է՝ նկատի ունենալով այն համակրանքը, որ Թուրքիան տածում է Հայաստանի հանդեպ»¹⁶: Այստեղ դժվար է բացատրություն տալ Կարաբեքիրի նման կեղծ սիրալիության ենթատեքստին: Իր ելույթի վերջում Թուրք պատվիրակության ղեկավարը եղրահանգում է, որ խորհրդային կողմի ներկայացրած մնացյալ հարցերը վերանայման ենթակա չեն և կարելի է ընդունել իսկույնեթ:

Իր սլառասխան ելույթում Յա. Գանեցկին առարկում է Կարաբեքիրի Անիի հարցի շուրջ առանձին հոդված ընդունելու առաջարկին՝ պատճառաբանելով, որ դա կարող է հակասել Մոսկվայի և Կարսի պայմանագրերի սահմանների մասին հոդվածներին, որովհետև ըստ Գանեցկու պարզաբանման՝ Մոսկվայի պայմանագրում Անին նշված է Թուրքական կողմում, իսկ այստեղ ընդունվելիք նոր հոդվածով կնշվի, որ Անի քաղաքն անցնում է Հայաստանին: Դրա փոխարեն Յա. Գանեցկին նսլատակահարմար էր գտնում Անիի համար ոչ թե առանձին հոդված ընդունել, այլ սլարղապես պայմանագրի բուն տեքստում նշել, որ Անի քաղաքն անցնում է Հայաստանին՝ նկատի ունենալով նրա պատմամշակութային նշանակությունը և զրա վերաբերյալ կատարել քաղաքական բնույթի հայտարարություն¹⁷: Հիչեցնենք, որ Անիի շուրջ այս քննարկումները կատարվում էին առանց իմանալու, թե Անգորայից ինչ պատասխան կստացվի:

Թուրքական պատվիրակության ղեկավարը դարձյալ պնդում է իր առաջարկը՝ Անի քաղաքի ավերակների խնդրում իբրև բացառություն ընդունել առանձին հոդված և այն մտցնել պայմանագրի մեջ. «Թուրքական

¹³ ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 131:

¹⁴ Նույն տեղում, թ. 99:

¹⁵ Документы внешней политики СССР, т. 3, с. 597 – 598.

¹⁶ ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 132:

¹⁷ Նույն տեղում:

պատվիրակությունը գտնում է, որ սահմանները վերջնականորեն ընդունված են Մոսկվայի խորհրդատուներին և անհնար է դրանց փոփոխումը կամ վերանայումը: Եվ միայն Անի քաղաքի ավերակների հարցում առաջարկում է ներառել հատուկ հոդված»¹⁸: Կարաբեքիրի այս ելույթից հետո Յա. Գանեցկին լրացուցիչ պարզաբանում է տալիս: Նա հայտնում է, որ, իր կարծիքով, ծագած թյուրիմացությունը հարթելու նպատակով «մեր պատվիրակությունը բնավ չի առարկում այն բանին, որ Անի քաղաքը անցնի հայկական կողմին և դրա վերաբերյալ կաղմվի առանձին հոդված: Մենք չենք առարկում առանձին հոդվածին, այլ գտնում ենք, որ Անիի մասին ղիջման փաստը արձանագրվի սահմանների մասին հոդվածում»¹⁹: Այստեղ Կարաբեքիր-Գանեցկի բանավեճի դիվանագիտական, իրավաբանական ձևակերպման նրբությունն այն էր, որ Կարաբեքիրը չէր ցանկանում պայմանագրի բուն տեքստում, այն էլ սահմանների մասին հոդվածում, ուր Մոսկվայի պայմանագրով հայ-թուրքական սահմանը սկզբունքորեն համարվում էր Ախուրյան դետրե, նշվեր (ֆիքսվեր), որ Անի քաղաքը հանձնվում է Հայաստանին, այլ գրա վերաբերյալ կաղմվեր առանձին հոդված, որը պետք է լիներ ոչ թե պայմանագրի բուն տեքստում, այլ «Բ» հավելվածի մեջ՝ իբրև առանձին կետ (հոդված): Ի վերջո, Կարաբեքիրը համաձայնում է Յա. Գանեցկու առաջարկին և Անիի հարցի քննարկումը հետաձգվում է մինչև որ Անգորայից պատասխան կստացվեր:

Սեպտեմբերի 28-ի արձանագրության մեջ ներառվեց հետևյալ ձևակերպումը. «Հայաստանի սահմանների մեջ ներառել Անի քաղաքի ավերակները»²⁰: Անդրկովկասյան միացյալ պատվիրակության կողմից առաջարկվեց արձանագրության վերոհիշյալ հատվածը մտցնել պայմանագրի նախագծի տեքստում: Թուրք պատվիրակությունը համաձայնեց՝ պայմանով, որ խնդրի վերջնական լուծումը պետք է տա Թուրքիայի ԱՄԺ կառավարությունը²¹:

Ի դեպ հավելենք, որ Անիի, Կողբի, այլ վիճահարույց առաջարկների և առհասարակ ողջ բանակցությունների ընթացքում չի արձանագրվել հայկական պատվիրակության որևէ ելույթ, արձագանք, անգամ՝ ռեպլիկ: Մինչդեռ Նախիջևանի և Բաթումի խնդիրների քննարկման ժամանակ պարզաբանիչ ելույթներով, այն էլ մի քանի անգամ հանգես են եկել Ադրբեջանի պատվիրակ Բ. Շահթախտինսկին և Վրաստանի՝ Շ. Էլիաֆան²²: Ավելորդ չենք համարում նաև տեղեկացնել, որ Կարս մեկնող հայ պատվիրակությունն իբրև ընծա, թուրք պատվիրակությանն է նվիրել գեղորայք, երկու արկղ կոնյակ, երկու արկղ գինի, երկու արկղ պահածո, 20 ֆունտ շաքար և 3 ֆունտ թեյ²³: Եվ այդ նվիրատվության համար սեպտեմբերի 30-ին Բ. Կարաբեքիրը իր շտաբի պետի միջոցով խորին շնորհակալություն է հայտնել Հայաստանի ա.գ. ժողկոմատի քարտուղար Խոջամիրյա-

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, թթ. 132-133:

²⁰ Նույն տեղում, գ. 11, թ. 273:

²¹ Նույն տեղում, թթ. 273-274:

²² Նույն տեղում, գ. 21, թթ. 114, 118-119, 127 և այլն:

²³ Նույն տեղում, ֆ. 114, դ. 1, գ. 172, թ. 8:

նին՝ ստացած դեղորայքի, պահածոների և կոնյակի համար²⁴: Ինչպիսի առատաձեռնությունն այն դեպքում, երբ այդ ժամանակ երկիրն ու ժողովուրդը մատնված էին սովի ու համաճարակի: Դժվար է միանշանակ հասկանալ այդ նվիրատվության իմաստը: Դրա տակ կարելի է հասկանալ և՛ կովկասյան հյուրասիրությունն ու առատաձեռնությունն, և՛ ինտերնացիոնալիստական համերաշխության ժեստ, և՛ սիրաշահում:

Անիի ավերակների խնդրի շուրջ քննարկումներ եղան նաև խորհրդա-ժողովի Միացյալ սահմանային հանձնաժողովի նիստերում: Այստեղ էլ սկզբում սահմանային հանձնաժողովի թուրքական պատվիրակության ղեկավարը պնդում էր Անիի ավերակների մասին հարցը հանել պայմանագրի հիմնական տեքստի առաջին հոդվածից և մտցնել պայմանագրի հավելվածում՝ իբրև ծանոթագրություն, այն հատվածում, երբ խոսք կգնա Ախուրյանի սահմանադրի մասին: Թուրք պատվիրակը պատճառաբանում էր, որ Մոսկվայի պայմանագրի տեքստին համապատասխան արդեն կազմվել է քարտեզ, որը փոփոխել այլևս չի կարելի²⁵: Խորհրդային կողմը (սահմ. հանձն. ղեկ. Բ. Կուզնեցով) գտնում էր, որ Անի քաղաքի ավերակները Հայաստանի տարածքի մեջ ներառելու մասին պետք է գրել պայմանագրի առաջին հոդվածի վերջում (իբրև ծանոթագրություն)²⁶: Քննարկումների արդյունքում Միացյալ սահմանային հանձնաժողովը հայտարարում է, որ անվերապահորեն ընդունում է Մոսկվայի պայմանագրի առաջին հոդվածում որոշված սահմանագիծը, որը փոփոխման ենթակա չէ: Վերապահություն է արվում միայն Անիի համար՝ սպասելով Անդորայից ստացվելիք վերջնական պատասխանին²⁷: Հետաքրքրական է, որ ՀՄՆՀ Ժողկոմատի 113-րդ Ֆոնդում կա հայ-թուրքական պայմանագրի 14 հոդվածանոց մի նախագիծ և սահմանագծի թիվ առաջին հավելված (ըստ ամենայնի կազմված Հայ պատվիրակության կողմից), որոնցում նշված է, որ հայ-թուրքական սահմանը ձգվում է Արփաչայ գետի հունով՝ Հայաստանի մեջ ներառելով Անի քաղաքի ավերակները, գուրս է գալիս Արաքս գետը, այնտեղից էլ Արաքսի հունով մինչև նրա աջ վտակ Ն. Ղարասու գետի թափվելու տեղը՝ Ուրմիա գյուղը²⁸:

Հարկ է նշել, որ խորհրդաժողովի ընթացքին Մոսկվայից ուղիուղով հետևել է Գ. Չիչերինը, իսկ Երևանից՝ Հայաստանի կառավարության նախագահ Ալ. Մյասնիկյանը: Նրանք բանակցությունների ընթացքի և արդյունքների մասին ամեն օր, նույնիսկ օրը մի քանի անգամ հեռագրերով տեղեկություններ ու հաշվետվություններ էին ստանում Յա. Գանեցկուց և Ա. Մուսվյանից: Յա. Գանեցկին վկայում է, որ բանակցություններն այնքան էլ հարթ չեն ընթացել. «Ժամանակ առ ժամանակ ստեղծվում էր այնպիսի տպավորություն, որ կարծես չի հաջողվի պայմանագիր կնքել»²⁹: Հոկտեմբերի 2-ի հեռագրում նա հայտնում է, որ «կոնֆերանսը ընթանում

²⁴ Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 271:

²⁵ Նույն տեղում, գ. 21, թ. 19:

²⁶ Նույն տեղում, թ. 9:

²⁷ Նույն տեղում, թ. 151:

²⁸ Նույն տեղում, գ. 23, թթ. 35-37:

²⁹ Նույն տեղում, գ. 21, թ. 83:

է դժվարութիւններով, թուրքերը համառում են, մեր պահանջներին հանդիպակած պահանջներ են ներկայացնում, ինչպես, օրինակ, պահանջում են վնասների հատուցում»³⁰: Զավեշտալին այն էր, որ հատուցում էր պահանջում այն կողմը, որը 1920թ. Հայաստանի դեմ պատերազմի արդյունքում՝ Սարիղամիշ-Մերդենեկից մինչև Արագածի փեշերը սփռել էր ավեր ու մահ, կողոպտել ու յուրացրել էր հայկական բնակավայրերը, տարել այն ամենը, ինչ հնարավոր է եղել տեղաշարժել: Տարել էին անգամ պատուհանի շրջանակներ, դռներ, երկաթուղային ռելսերն ու փայտակոճերը (չպալները)³¹:

Անիի խնդրում ճակատագրական եղավ հոկտեմբերի 5-ը: Տասնօրյա սպասումներից հետո թուրքական պատվիրակութունը կտրուկ մերժեց Անիի ավերակները որևէ ձևակերպմամբ Հայաստանին վերադարձնելու պահանջը: Նրանք հայտարարեցին, որ «Ագորան համաձայն չէ Անին զիջել Հայաստանին»³²: Ա. Մուսկյանը Կարսից հեռագրում է երևան՝ Ալ. Միսսնիկյանին: Նա հաղորդում է, որ հոկտեմբերի 5-ին Հայաստանին վերաբերող հոգովածների քննութիւնն ժամանակ թուրքերը ցուցաբերեցին կտրուկ անհաշտփողականութուն և հրաժարվեցին վերադարձնել Անիի ավերակները³³: Եղան սուր ելույթներ: Խորհրդային կողմից հանդես եկավ միայն Գանեցկին: Նույն հոկտեմբերի 5-ին վերջինս հեռագրում է Մոսկվա՝ Զիչերինին. «Թուրքերը մերժեցին Անիում գիտական աշխատանքներ կատարելու հարցը՝ պատճառաբանելով, որ դրա համար թուրքիայում ստեղծված են լայն հնարավորութուններ»³⁴: Դրա փոխարեն խորհրդային կողմը բարձրացնում է Կողբի վարձակալութիւն (կոնցեսիայի) խնդիրը, սակայն թուրքերը սա էլ են մերժում՝ պատճառաբանելով, որ դա սոսկ կոմերցիոն (առևտրական) հարց է և չի կարելի կոնֆերանսի քննարկման նյութ դարձնել³⁵:

Հոկտեմբերի 10-ին խորհրդաժողովը թևակոխեց եզրափակիչ փուլ: Հողված առ հողված (ընդամենը 20 հողված և 3 հավելված) քննվում և հաստատվում է տրվում պայմանագրի նախագծին: Երկու կողմից էլ եղան սլաշտոնական հայտարարութիւններ վիճելի կետերի շուրջ: Սահմանագծի վերաբերյալ Յա. Գանեցկին մեկ անգամ ևս հայտարարութիւն արեց Անիի վերաբերյալ: Նրա հայտարարութիւնը բովանդակում էր հետևյալը. «Անդրկովկասյան հանրապետութիւնների պատվիրակութիւնները ամենախորունկ ցավով արձանագրում են Անիի մասին իրենց արած առաջարկի մերժումը, որը ներկայացնում էր հայերի համար ազգային-պատմական և գեղարվեստական արժեք»³⁶: Անիի խնդրի շուրջ Կարաբեքիրը, առարկելով Յա. Գանեցկուն, նեղացած տոնով պատասխանել է, որ մերժումը կապված է Մոսկվայի դաշնագրի սկզբունքի չխախտման հետ, որ Անին գտնվում է

³⁰ Նույն տեղում:

³¹ Է. Ա. Զ ո Ր ա բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 240:

³² ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 23, թ. 58:

³³ Նույն տեղում, թ. 57:

³⁴ Նույն տեղում, գ. 21, թ. 97:

³⁵ Նույն տեղում, գ. 23, թ. 48:

³⁶ «Խորհրդային Հայաստան», 23.X.1921:

Ախուրյան գետի արևմտյան ափին, ուստի, եթե այն տրվի Հայաստանին, ապա կխախտվի Մոսկվայի պայմանագրի սկզբունքը: Սակայն ըստ Կարաբեքիրի՝ հնարավորություն կտրվի այնտեղ այցելել և գիտական աշխատանքներ կատարել³⁷: Հոկտեմբերի 11-ին Ալ. Մյասնիկյանին ուղղված հեռագրում Ա. Մոսկվայնը հայտնում է, որ թուրքերը արգելքներ չեն հարուցի բոլոր նրանց համար, ովքեր կցանկանան այցելել Անիի ավերակները³⁸: Հարց է ծագում՝ մինչև օրս որքանով են Հայաստանն ու Հայերը օգտվել այդ հնարավորությունից:

Հոկտեմբերի 13-ին՝ ժամը 12-ին, գումարվեց խորհրդագրողովի վերջին 6-րդ նիստը: Այն բացեց Յա. Գանեցկին և հայտարարեց, որ «եղբայրուկության և բարեկամության մասին» սլայդանագիրը պատրաստ է: Ստորագրման պահին Կարսի ամրոցից արձակվեց հրանոթային 4 համազարկ և թուրքական նվազախումբը կատարեց «ինտերնացիոնալ» ու թուրքիայի պետական հիմնը: Պայմանագիրը ստորագրեցին այրբենական կարգով՝ Հայաստանը, Այրբեջանը, Վրաստանը, թուրքիան և Ռուսաստանի ներկայացուցիչը: Փոխադարձ շնորհավորանքներից հետո նույն օրը խորհրդային պատվիրակները գնացքով մեկնեցին Կարսից³⁹: Կարսից երևան վերադառնալիս Յա. Գանեցկին գրույցի ժամանակ խոստովանում է, որ «Կարսի կոնֆերանսի ընթացքը կանխորոշված էր գեո Մոսկվայի կոնֆերանսում»⁴⁰: Միաժամանակ նա չէր թաքցնում, որ իրենք «պայմանագիր են կնքել Արևելքի ժողովուրդների եղբայրական միություն ստեղծելու համար»⁴¹:

Հետաքրքիր է հայ մամուլի գնահատականը Կարսի պայմանագրի վերաբերյալ, որն, անշուշտ, արտահայտում է այն ժամանակաշրջանի ոգին: «Խորհրդային Հայաստան» թերթի հոգվածագիրը, հիասթափված Կարսի պայմանագրի արդյունքից, մասնավորապես, գրում էր. «Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ անհրաժեշտ են»⁴²: Սակայն մեկ այլ տեղ թերթը միամտաբար հույս էր հայտնում, թե «Մենք այս հարցերը կլուծենք խաղաղ և բարեկամական թուրք ժողովրդի հետ՝ Անդրկովկասի և Ռուսաստանի եղբայրակից հանրապետությունների օժանդակությամբ»⁴³: «Խորհրդային Հայաստան» թերթի գավեշտ հիշեցնող գնահատականով՝ «Կարսի կոնֆերանսի արդյունքում մենք ձեռք բերեցինք մի ընդհանուր թշնամի՝ միջազգային իմպերիալիզմ»⁴⁴:

Արդեն 1922 թ. հունվարի վերջին գումարված ՀԿԿ առաջին համագումարում Ս. Լուկաշինը իր գեկուցման մեջ ոչ ավել, ոչ սակաւ հետևյալ կերպ է գնահատում և արդարացնում այդ սլայդանագիրը. «Կարսի հայտնության պայմանագիրը, որը գրեթե նույն Ալեքսանդրապոլի պայմանագիրն է, իրավ շատ ծանր պայմանագիր է, սակայն այստեղ մեզ հարկավոր

³⁷ Նույն տեղում:

³⁸ ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 58:

³⁹ «Խորհրդային Հայաստան», 23.X.1921:

⁴⁰ Նույն տեղում, 18.X.1921:

⁴¹ ՀՀ ՆՊ ՊԿԱ ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 143:

⁴² «Խորհրդային Հայաստան», 21.X.1921:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նույն տեղում, 12.XI.1921:

էր գլխավորը՝ Հայաստանի աշխատավորութիւնը եղբայրական ձեռք է մեկնում Թուրքիայի աշխատավորութեանը: Մենք այդ բանակցութիւններում պետք է փրկենք Հայաստանի ինտերնացիոնալ դեմքը, և մենք հասանք դրան»⁴⁵: Եվ այսպիսով, Հայաստանը փրկեց իր «ինտերնացիոնալ պատիւը»: Այլ խոսքով, Հայաստանի կենսական շահերը զոհաբերվեցին այսպես կոչված պրոլետարական ինտերնացիոնալիզմի սին գազափարներին:

1921 թ. դեկտեմբերի 10-ին Թիֆլիսում համապատասխան քարտեզագրմամբ հաստատվեց Թուրք-անդրկովկասյան սահմանագիծը, որը տառացիորեն կրկնեց Մոսկվայի պայմանագրով գծվածը⁴⁶:

Այսպիսով, այն Թուրքիան, որը Առաջին աշխարհամարտի տարիներին կոտորեց 1.5 մլն արևմտահայ և յուրացրեց ողջ Արևմտահայաստանը, այդ նույն Թուրքիան, խորհրդային պետութիւնի բարեկամ և հեղափոխական ձեռնադրով, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Հայաստանից խլեց և իրեն միացրեց 22.5 հազար կմ² արևելահայ տարածք⁴⁷: Իսկ եթե դրան ավելացնենք ավելի քան 6 հազար կմ²-ոց Նախիջևանի մարզը, որն էլ Թուրքիայի պահանջով հանձնվեց Ադրբեջանին, ապա ստացվում է, որ (անգամ չհաշված 4.2 հազար կմ² Լեռնային Ղարաբաղը) Հայաստանը կորցրեց իր իրական տարածքների շուրջ կեսը՝ 28.5 հազար կմ² և պարփակվեց ընդամենը 29.8 հազար կմ² տարածքի շրջանակներում: Ինչպես տեսանք, Կարսի խորհրդագրով հանձնվեց Հայաստանին միացնել խորհրդանշական մի փոքրիկ հողակտոր՝ Հայոց հնամենի Անի մայրաքաղաքի ավերակները, որը հայ ժողովրդի համար ուներ զուտ պատմամշակութային նշանակութիւն: Թուրքիան սակարկեց և այդպես էլ Հայաստանին չվերադարձրեց ընդամենը 860 հազար մ² կամ 0.86 կմ² կազմող Անիի ավերակները և դրա շրջակայքում գտնվող մի քանի գյուղեր⁴⁸: Ամենուրեք սփռված բազմադարյա քարե վկա-հուշարձանները այդպես էլ բավարար չհամարվեցին լուծելու Անիի իսկական պատկանելութիւնը հարցը: Միգուցե քաղաքական անցանկալի նախագեպը կամ հեռանկարը հաշվի առնելով էր, որ Թուրքերը մերժեցին հայերի նույնիսկ այդ համեստագուշայն առաջարկը: Այդպիսով, Անին Մասիսի նման մնաց գերված օտարի ձեռքում: Այսքան մոտիկ և այսքան հեռու Անին նույնպես Հայ դատի հոգևոր մասնիկն է: Եվ ներկայիս Հայաստանն ու հայ ժողովուրդը ունեն բոլոր հիմքերը (պատմաքաղաքական, իրավաբարոյական) չեղյալ համարելու Կարսի անարդար պայմանագիրը ու պահանջատեր լինելու Անիին և մյուս բռնագավթված հողերին:

⁴⁵ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 3:

⁴⁶ ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 185-187:

⁴⁷ Ս. Ա. ր. ար. ա. յ. ա. ն. Ճշմարտութիւններ Կովկասի մասին. Պուրքեշ, 1941, էջ 8:

⁴⁸ Գ. ր. ի. գ. ո. ր. Մ. Վ. ար. գ. ա. պ. ե. տ. Պ. ա. լ. ա. ք. յ. ա. ն. Նկարագրութիւն Անիի ավերակներուն. Կ. Պոլիս, 1910, էջ 19-20:

КАК АНИ НЕ БЫЛ ПРИСОЕДИНЕН К АРМЕНИИ (1921 г.)

ԱՐԱՐԱՏ ԱԿՕՊՅԱՆ

Р е з ю м е

Данная статья посвящена Карсской турецко-закавказской мирной конференции 1921 г., во время которой был поднят вопрос о возвращении Армении развалин древнеармянской столицы Ани (всего около 1 км). Исследования протоколов и других приложенных материалов конференции показывают, что вокруг этого вопроса было развернуто интересное и поучительное обсуждение. В начальной фазе переговоров турецкая сторона, сделав дипломатический жест, в порядке исключения, согласилась вернуть Армении развалины Ани: объявив, что она хочет сделать армянам приятный сюрприз, имея в виду, что для армянского народа Ани имеет важное историко-культурное значение. Однако, после десятидневного ожидания, в конце переговоров, по неясным причинам и соображениям, турецкая делегация, получив соответствующее указание из Ангоры, отклонила даже это скромнейшее предложение советской стороны.